Սուրբ Միհնասի մատուան մօտ է Ս. Մակար հայրապետի գերեզմանը. ան հայրապետն էր Երուսաղէմի, և որուն պատմութիւնը գրուած է «Վարք հարանց»ի մէջ, և Նիկիոյ Ս. Ժողովին 318 հայրապետներէն մին էր (Հան. էջ 90)։

Ս. Մակարի մատրան քով՝ եկեղեցիին դրան մօտ կայ փոքրիկ դուռ մը՝ ուրկէ երեսուն աստիճանով կ'ելլուի դէպի արևելք. նոյն ճանապարհին վրայ կը գտնուի Քրիստոսի Երկոտասան Առաքելոց եկեղեցին, «յոյժ հրաշագործ, ուր բազում անգամ զլոյս տեսեալ են արժանաւոր անձինք որ պատմեցին մեզ. և է՛ հընագոյն եւ սագաշէն, որպէս և լուեալ եմ, թէ ընդ մեծի եկեղեցւոյն չինեցաւ յատուկ աղօթարան թագաւորաց, զի դուռն ի տանեաց է» (Հան. էջ 91)։

Եկեղեցիին հարաւային կողմը կը տեսնուի մեծ դուռ մը, որ Ս. Ստեփանոսի դիմացն է։ Այս դուռը չորս մարմարեայ սիւներու վրայ անկիւնացեալ կամարով շատ գեղեցիկ է և այս դուռէն կը մտնուի Ս. Էջմիածնի եկեղեցին՝ «Եւ կան աստ երեք սրբազան քարինք պատուականք, բերեալ ի հրեշտակէ վասն խնդրոյ Ս. Աստուածածնին, զի զկնի Համբարձմանն Տեառն՝ չար հրեայքն ոչ թոյլ տային թագուհւոյն երկնից շրջագայիլ ի սրբութեան տեղիսն, որպէս գրեալ է Յայտմաւուրն ի ճառի Ննջման Սրբուհւոյն, թէ յորժամ զնաց ի գետ Յորդանան երկրպագել՝ ընթացան զկնի նորա հրեայքն առ ի վնասել. և հրեշտակ տեառն անցոյց զնա յայնկոյս գետոյն և յամօթի հարան, ո-

---

ւանական է որ ա՛ն եղած բլայ վերը յիշուած բաղնիքին գուռը, որուն մէջ Կիւրեղի ձեռքով նորաղարձները մկրտուեցան (**Սաւ.** Հաս. Ա. էջ 225-226)։